ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏ

0025, Երևան, Նալբանդյան 130, ընդունարան հեռ.՝ 59 66 59, քարտուղարություն հեռ.՝ 59 61 25

№ 24/549 « 11 » 03 2016 թ.

Ձեր

2/1048-16
12.03.16թ.

Հայաստանի Հանրապետության
մարդու իրավունքների պաշտպան
պարոն Ա.Թաթոյանին

Հարգելի պարոն Թաթոյան

Ձեր կարծիքին է ուղարկվում «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի N 277-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

Առդիր՝ « 5 » թերթ:

/ ԳԵՆԵՐԱԼ-ԼԵՅՏԵՆԱՆՏ Վ. ԳԱՍՊԱՐՅԱՆ

Իրավաբանական վարչություն
կատարող՝ Ս. Աբրահամյան
հեռ՝ 59-60-91

ՀՀ ՄԻՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆ
ՄՈՒՏՔ
ՄՈՒՏՔ ԹԻՎ 11-78
«12» 03 16

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N _____-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 19-Ի N 277-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի «ժդ» կետի պահանջների կատարումն ապահովելու նպատակով, հիմք ընդունելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ և 5-րդ մասերը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի «Վարորդի սթափության վիճակի զննության կարգը, այդ զննության արձանագրության և գրանցման մատյանի ձևերը հաստատելու մասին» N 277-Ն որոշման (այսուհետ՝ որոշում) մեջ կատարել հետևյալ լրացումները.

1) որոշման 1-ին կետի 1-ին, 2-րդ և 3-րդ ենթակետերը «վարորդի» բառից առաջ լրացնել «բուժհաստատությունների կողմից» բառերով.

2) որոշման 1-ին կետը լրացնել նոր 4-րդ և 5-րդ ենթակետերով հետևյալ բովանդակությամբ.

«4) ոստիկանության ծառայողի կողմից տեխնիկական միջոցով արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակության միջոցով վարորդի սթափության վիճակի զննություն (ոչ սթափ վիճակում լինելու փաստի ստուգում) իրականացնելու կարգը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) ոստիկանության ծառայողի կողմից տեխնիկական միջոցով արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակության միջոցով վարորդի սթափության վիճակի զննության արձանագրության ձևը՝ համաձայն N 5 հավելվածի:».

3) որոշման 1-ին, 2-րդ և 3-րդ հավելվածների վերնագրերը «**ՎԱՐՈՐԴԻ**» բառից առաջ լրացնել «**ԲՈՒԺՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ**» բառերով.

4) որոշումը լրացնել նոր՝ N 4 և N 5 հավելվածներով՝ համաձայն հավելված 1-ի և հավելված 2-ի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ **Հ.ԱԲՐԱՀԱՄՅԱՆ**

2016թ. _____ «____»
Երևան

Հավելված 1
ՀՀ կառավարության 2016 թվականի
_____ ___-ի N ____-Ն որոշման

«Հավելված N 4
ՀՀ կառավարության 2009 թվականի
մարտի 19-ի N 277-Ն որոշման

ԿԱՐԳ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՐՏԱՇՆՉԱԾ ՕԴԻ ՄԵՋ ՄԱՔՈՒՐ ԱԼԿՈՀՈԼԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՈՐԴԻ ՍԹԱՓՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ԶՆՆՈՒԹՅՈՒՆ (ՈՉ ՍԹԱՓ ՎԻՃԱԿՈՒՄ ԼԻՆԵԼՈՒ ՓԱՍՏԻ ՍՏՈՒԳՈՒՄ) ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ

1. Սույն կարգով կարգավորվում են «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 1-ին կետի «ժդ» ենթակետի հիման վրա ոստիկանության ծառայողի կողմից տեխնիկական միջոցով արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակության միջոցով վարորդի սթափության վիճակի զննություն (ոչ սթափ վիճակում լինելու փաստի ստուգում) իրականացնելու (այսուհետ՝ վարորդի սթափության վիճակի զննություն) հետ կապված հարաբերությունները:

2. Վարորդի սթափության վիճակի զննությունն իրականացվում է տեխնիկական միջոցով վարորդի արտաշնչած օդի հետազոտության միջոցով՝ օդի փորձանմուշները վերցնելուց անմիջապես հետո:

3. Վարորդի սթափության վիճակի զննություն իրականացնելու համար ոստիկանության ծառայողը տեխնիկական միջոց է մուտքագրում զննության ենթակա վարորդի անունը, ազգանունը, տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը, վարորդական վկայականի (բացակայության դեպքում՝ անձը հաստատող որևէ փաստաթղթի) սերիան, համարը, որից հետո առաջարկում է վարորդին արտաշնչելու միջոցով անցնել սթափության վիճակի զննություն:

4. Եթե վարորդի սթափության վիճակի զննության արդյունքում պետք է կազմվի վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն, ապա տեխնիկական միջոցով կազմվում է (տպագրվում է) նաև վարորդի սթափության վիճակի զննության արձանագրություն՝ երկու օրինակից՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի «Վարորդի սթափության վիճակի զննության կարգը, այդ զննության արձանագրության և գրանցման մատյանի ձևերը հաստատելու մասին» N 277-Ն որոշման N 5 հավելվածով հաստատված ձևի:

5. Վարորդի սթափության վիճակի զննության արձանագրության մեկ օրինակը տրվում է վարոդին, իսկ երկրորդ օրինակը՝ կցվում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությանը:

6. Եթե վարորդի սթափության վիճակի զննության արդյունքում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չի կազմվելու, ապա տեխնիկական միջոցով վարորդի սթափության վիճակի զննության արձանագրություն չի կազմվում (տպագրվում):

7. Արտաշնչած օդի հետազոտության միջոցով վարորդի սթափության վիճակի զննության արդյունքների հետ համաձայն չլինելու դեպքում վարորդը կարող է պահանջել, որ իր սթափության վիճակը որոշվի նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի «Վարորդի սթափության վիճակի զննության կարգը, այդ զննության արձանագրության և գրանցման մատյանի ձևերը հաստատելու մասին» N 277-Ն որոշմամբ նախատեսված այլ եղանակով (մեթոդով):»:

Հավելված 2
ՀՀ կառավարության 2016 թվականի
_____ ___-ի N ____-Ն որոշման

«Հավելված N 5
ՀՀ կառավարության 2009 թվականի
մարտի 19-ի N 277-Ն որոշման

Ձ ԵՎ

ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՂԻ ԿՈՂՄԻՑ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԱՐՏԱՇՆՉԱԾ ՕԴԻ ՄԵՋ ՄԱՔՈՒՐ ԱԼԿՈՀՈԼԻ ՊԱՐՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՈՎ ՎԱՐՈՐԴԻ ՍԹԱՓՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՁՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ

ՎԱՐՈՐԴԻ ՍԹԱՓՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԻ ՁՆՆՈՒԹՅԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N _____

Սարքի համարը՝ _____

Վերջին ստուգաչափման օրը, ամիսը, տարին՝ _____

Ձննության ձևաչափը՝ _____

Ձննության օրը, ամիսը, տարին՝ _____

Ձննության ժամը՝ _____

Ալկոհոլի պարունակությունը՝ _____

Վարորդի անունը՝ _____

Վարորդի ազգանունը՝ _____

Տրանսպորտային միջոցի հաշվառման համարանիշը՝ _____

Վարորդական վկայականի սերիան, համարը՝ _____

Տեսուչի ազգանունը՝ _____

Կրծքանշանի համարը՝ _____

Ստորաբաժանումը՝ _____

Ստորագրությունը՝ _____»:

ՏԵՂԵԿԱՆՔ - ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի N 277-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ

1. Անհրաժեշտությունը

Նախագծի ընդունումը պայմանավորված է ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 19-ի N 277-Ն որոշումը «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխանեցնելու անհրաժեշտությամբ:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 19-ի N 277-Ն որոշմամբ սահմանված է միայն բուժհաստատությունների կողմից վարորդի սթափության վիճակի զննության կարգը, այդ զննության արձանագրության և գրանցման մատյանի ձևերը, սակայն «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքում 2015 թվականի դեկտեմբերի 21-ին ընդունված ՀՕ-183-Ն օրենքով կատարված փոփոխությամբ նախատեսվել է, որ ոստիկանության ծառայողները ևս կարող են տեխնիկական միջոցով սահմանված կարգով իրականացնել արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակության միջոցով վարորդի սթափության վիճակի զննություն (ոչ սթափ վիճակում լինելու փաստի ստուգում):

3.Կարգավորման նպատակը և բնույթը

Նշված խնդրին լուծում տալու համար նախապատրաստվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի N 277-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը, որով սահմանվում է ոստիկանության ծառայողի կողմից տեխնիկական միջոցով արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակության միջոցով վարորդի սթափության վիճակի զննություն (ոչ սթափ վիճակում լինելու փաստի ստուգում) իրականացնելու կարգը, ինչպես նաև ոստիկանության ծառայողի կողմից տեխնիկական միջոցով արտաշնչած օդի մեջ մաքուր ալկոհոլի պարունակության միջոցով վարորդի սթափության վիճակի զննության արձանագրության ձևը:

4. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը նախապատրաստվել է Ճանապարհային ոստիկանության կողմից:

5. Ակնկալվող արդյունքը

Որոշման նախագծի ընդունմամբ ՀՀ կառավարության 2009 թվականի մարտի 19-ի N 277-Ն որոշումը կհամապատասխանեցվի «Ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի պահանջներին:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի N 277-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացման կամ նվազեցման մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի N 277-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ պետական բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի N 277-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության մասին

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի մարտի 19-ի N 277-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման ընդունմամբ այլ իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտություն չի առաջանա:

ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅՈՒՆ